

ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ.

2.

ԱԻԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ:

Նոր չէ, որ աշխարհիս վերայ հարուստ ու աղքատ կայ: Բոլոր մարդիկ հաւասար հարուստ ու հաւասար աղքատ են այնտեղ միայն, ուր թռչունի պէս են ապրում՝ բնութեան, այդ հասարակաց մօր գրկից անմիջապէս ստանում իրենց օրական սնունդը. թէպէտ այդտեղ էլ քիչ չի պատահում, որ զօրեղը թոյլին ճնշէ, նորա ժողովածը ձեռքից խլէ, բանեցնէ նորան իւր համար, ու ինքն աւելի փարթամ ու անաշխատ ապրէ: Բայց երբ մարդու իւր ձեռքի աշխատանքն է դառնում ապրուստի միջոց, երբ հաղարաւոր ժողովուրդ խմբուում է մի փոքրիկ տարածութեան վերայ՝ քաղաք ու հասարակութիւն կազմում, առւեաւոր սկըսում, — խտրութիւնը հարուստի և աղքատի մէջ պէտք է անպատճառ զգալի լինի և գնալով մեծանայ: Մէկը շատ է աշխատում, միւսը քիչ. մէկը պահում ու բազմապատկում է իւր աշխատանքի պտուղները, միւսը վայելում է ու վատնում. մէկը միայն իւր երկու ձեռքն ունի աշխատելու համար, միւսն ունի հօրից ստացած ժառանգութիւն, որ արդիւնք և տոկոս է բերում, կամ իւր մտքի ճարտարութիւնը կարող է գործ դնել՝ հաղարաւոր ներելի և աններելի միջոցներով: Եւ ահա հետզհետէ ստեղծուում է մի դրութիւն, ուր ումանք բաց են անում աչքը աղքատութեան մէջ և չարքաշ կեանք վարում մինչև վերջին շունչը՝ ուրիշները հարուստ ծնուում են և հեշտ ու փարթամ ապրում: Եւ հարց է ծագում՝ ըստ ինքեան, ինչո՞ւ այդպէս պէտք է լինի, ինչո՞վ են մեղաւոր առաջիններն ու արտօնեալ վերջիններս: Այդ հարցը շատ է զբաղեցրել մարդկութեանը, բայց ներկայումս

նա լոկ իմաստասիրութեան առարկայ չէ, այլ խիստ կենսական մի խնդիր՝ մանաւանդ քաղաքակրթութեամբ աշխարհի համար, կարելի է ասել, հասարակական խնդիրներէ մէջ ամէնից կենսականը, ամէնից ստիպողական լուծում պահանջողը: Եւ ահա բնականաբար շատերի հայեացքը դէպի նա է դառնում, որի կոչումն էր՝ «աւետարանել աղքատաց», և կկամենային ստոյգն իմանալ, թէ ի՞նչ է պատասխանում նա այդ հարցին:

Այստեղ ևս իրարից շատ տարբեր, որոշ կէտերում տրամադծօրէն հակառակ հայեացքներն ենք հանդիպում: Ոմանց ասելով, Յիսուսի գործունէութեան և աւետարանի քարոզութեան իսկական նպատակն է եղել համայնական կեանքը յիդափոխել, աղքատների վիճակը բարւոքել, և աւետարանն ուրիշ բան չէ, բայց եթէ համայնական կեանքի մի ընդարձակ ծրագիր, որ բոլոր մարդոց հաւասարութիւն, տնտեսական կարիքների և ուրիշ արտաքին պայմանների ճշնշումից աղատութիւն է պահանջում: Ասկայն այսպէս մտածողների մի մասը միայն բարեմիտ է՝ աւետարանի արժէքը բարձրացնել, ժամանակակից կեանքի մէջ նորան պատուաւոր դիրք և գործնական գեր ընծայել է կամենում, միւս մասն ընդհակառակը համարում է նորա ծրագիրը բոլորովին անիրագործելի և օղալին: Իբր Յիսուս իրականութեան մօտին մութ գաղափար ունէր, ինքն աղքատ դասի միջից ելած լինելով՝ այդ դասին յատուկ կասկածով և խորթութեամբ էր նայում հարուստների վերայ և արուեստների ծաղկումն ու վաճառաշահութիւնը չէր գնահատում, — նորա առաջնորդող գաղափարն ու ծրագիրը մի ողորմելի բան էր՝ ընդհանուր աղքատութիւն: — Ուրիշները թէ սկզբունքով և թէ հայեցակէտով բոլորովին տարբերում են այս երկու խմբից: Նոքա չեն ընդունում, թէ Յիսուս մասնակցութիւն է ունեցել իւր ժամանակի տնտեսական և հասարակական գործերում, և հերքում են նոյն իսկ այսպիսի խնդիրների վերաբերեալ որ և է սկզբունքի գոյութիւնը աւետարանի մէջ: Նոցա ասելով Փրկիչն առօրեայ կեանքից միայն պատկերներ ու առակաւոր խօսքեր է վերցրել իւր քարոզութեան հա-

մար՝ անձամբ կարեկցել է ի սրտէ խեղճերի, աղքատների, ցաւապարների վիճակին, բայց ամենեւին նպատակ չի ունեցել նոցա երկրաւոր կացութիւնը բարեփոխելու, այլ միայն երկնաւորից է խօսել, կրօնական զգացումներ ներշնչել, հոգեւոր փրկութիւն պատրաստել: Կան մինչև անգամ՝ այնպիսիները, որոնք ներկայացնում են Նորան իրրե մի ծայրահեղ պահապան, որ տիրող կարգերի մէջ ոչ մի փոփոխութիւն չի կամեցել մտցնել՝ թողել է ամէն ինչ այնպէս, ինչպէս կայ:

Արդ, ո՞րն է ուղիղն այս տարուբեր կարծիքներէից: — Ուղիղը որոշելու համար մենք պէտք է նախ մի գաղափար կազմենք այն հասարակութեան մասին, որի հետ գործ ունէր Փրկիչը: Աղքատների, խեղճերի, որբերի ու այլ ընկերի վիճակը գուցէ աւելի դառն չէր այստեղ, քան ուրիշ տեղերում՝ նոյն ժամանակ և առաջ եղել է. բայց մարգարէների ու սաղմոսերգուների դպրոցից ելած մի ժողովրդի մէջ անշուշտ շատ աւելի խոր կերպով էր զգացուում նորա դառնութիւնը: Բոլոր ճշմարիտ մարգարէները թշուառների պաշտպան էին և իրրե Խորայէլի Աստուծոյ առաջին ու ամենակարեւոր պահանջ ներկայացնում էին՝ արդարադատութիւն որբերի, գութ ու խնամք անանկների համար: Նոցա քարոյր լսողներ սովորաբար քիչ էին լինում. նիւթական ոյժն ու մարդոց ստոր կրքերն իրենց գործը յառաջ էին տանում, և ամբօխը շարունակում էր գնալ այնպիսիների ետեւից, որոնք արդարութեան դիւրին ճանապարհ էին ցոյց տալիս: Քահանան ասում էր. ամենից առաջ Աստուծուն պէտք է հատուցանես պարտքդ՝ զո՛հ բեր Նորա սեղանի վերայ, նուէրներ տո՛ւր Նորա սպասաւորներին, և կփակես Նորա աչքը, քաւութիւն կգանես քո մեղքերի համար: Սրէնսգէտներ եկան և հազար ու մի կարգեր սահմանեցին, որոնց ուղիղ գործադրութիւնն իրենցից պիտ սովորէին, և գործադրելով: Աստուծոյ օրէնքը պահած՝ արդարութեան ճանապարհի վերայ օր աւուր յառաջադիմած լինէին, մինչև որ կկարողանային հպարտ հպարտ կանգնել Աստուծոյ առաջ, պարծանքով թուել իրենց արդարութիւններն ու հատուցում պահանջել: Բայց Խորայէլի որդւոց՝ յատկապէս խեղճ, հարստահարեալ,

օրական հացի կարօտ դասի մէջ, երբէք չսպառեցան մարդիկ որոնք այրուած սրտով և բուռն ակնկալութեամբ սպասում էին, թէ երբ մարգարէների խօսքը կկատարուի, Աստուծոյ ողորմութեան զուրը կբացուի և կգայ մէկը՝ «արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր և ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր» — պաշտպանելու համար անանկների իրաւունքը: Ահա այսպիսի «հոգևով աղքատներ», ի նկատի ունի Փրկիչն ըստ մեծի մասին, երբ հա խօսքն աղքատների վերայ է դարձնում: Պէտք է չմոռանանք ուրեմն, որ այստեղ իրար դէմ կանգնած են ոչ թէ Նւրոպայի խոշոր դրամատէրերն ու զործարանական բանուորները, ոչ թէ մեր անհոգի վաշխառուներն ու արիւնաքամ գիւղացիները, այլ հրէից պճնազարդ քահանայապետները, արդար օրէնսգէտ փարիսեցիներն ու այն այրիները, մեղաւորները, որոնց լուման նոքա զանձանակի մէջ էին ընդունում և իրենց արհամարհում՝ պատշաճ հեռաւորութեան վերայ պահում: Այդ է պատճառը, որ աւետարանի մէջ շատ տեղ հոգևոր ու մարմնաւոր աղքատութիւնը նոյնանում են՝ աղքատ կոչուում են նոքա, որոնք ճշմարտութեան խօսքին կարօտում են ինչպէս երկնային մանանային, և ընդհակառակն մեծատուն նոքա, որոնց աշխարհային ցանկութիւններով յղիացած սիրտը փակուել է ընդ միշտ այդ խօսքի համար: Ուստի աւետարանի այն բոլոր ասացուածները, որոնք վերաբերում են հոգևով աղքատներին՝ պէտք է մի կողմ թողնել, և ապա տեսնել, թէ ինչ վերաբերմունք է ցոյց առնու նա դէպի զուտ անտեսական կարիքի ներքոյ հեծողների վիճակը:

Նախընթաց գլխում յիշուած է արդէն, թէ ինչպիսի մեծ վտանգ էր համարում Յիսուս հարստութիւնը մարդոց բարոյական կեանքի համար, որովհետեւ հարստութիւնը նոցա սրտերը խտացնում, աշխարհային հոգսերի մէջ կաշկանդում և զանազան վայելքների հրապոյրով հեռացնում է նոցանից՝ անմաաչելի դարձնում երկնքի արքայութիւնը: Սակայն կատարեալ անմտութիւն է ի հարկէ առարկել, թէ հա կամենում էր, որ բոլորեքեան աղքատ ու թշուառ լինեն, և բոկոսանների այդ բազմութիւնից իւր արքայութիւնը կազմէ:

Կատարելապէս հակառակն է ճշմարիտ: Նա ամէն բանի իւր
 իսկական անունն է տուել և երբեք կարիքը ձոխութիւն,
 թշուառութիւնը երջանկութիւն չի համարել: Ո՛չ միայն չի
 նպաստել դոցա զօրանալուն, այլ ամէն կերպ մաքաւել է դո-
 ցա դէմ և վերացնելու ձգտել: Նորա ամբողջ գործունե-
 ութիւնը փրկչական է նաև այն տեսակէտից, որ կռիւ է եղել
 թշուառութեան դէմ: Կարելի էր մինչև իսկ առարկել, թէ
 նա չափազանց մեծ ուշադրութիւն է դարձնում աղքատու-
 թեան չարիքի վերայ և աւելի նշանակութիւն տալիս նորա
 դէմ գործող առաքինութիւններին՝ ողորմածութեանը, քան
 պէտք է. սակայն նա իրօք աղքատութիւնն ու թշուառու-
 թիւնը չի նկատում իբրև ամենամեծ չարիք, այլ մեղքը,
 ուստի և ողորմածութիւնից աւելի բարձր է դնում անյի-
 շաչարութիւնը:—Յամենայն դէպս աղքատութեան ջատագով
 նա չի եղել, և այն միջնագարեան կրօնաւորները, որոնք
 քնդհանուր աղքատութիւն էին քարոզում և մուրացկա-
 նութիւնն իբրև առաքինութիւն ներկայացնում, իրաւունք
 չունէին նորան իրենց քարոզութեան վկայ կոչելու: Յիրաւի
 նա պարտք էր դնում այն աշակերտների վերայ, որոնք պէտք է
 իրենց ամբողջ կեանքն աւետարանի քարոզութեան նուիրէին՝
 ձեռք վերցնել բոլոր ունեցուածքից կամ աշխարհային գոյքից.
 բայց չի կամեցել երբեք, որ նոքա մուրացկանութիւն անեն: Պօ-
 դոս առաքնապը մի տեղ (Ա. Կորնթ. Թ. 14) յիշում է. «Տէրը
 հրաման է տուել, որ աւետարան քարոզողներն աւետարա-
 նից հոգան իրենց ապրուստը»: Այդ խօսքը չկայ մեր աւե-
 տարաններում, դուրսը պահուած սակաւութիւ տէրունական
 խօսքերից մէկն է, բայց նորա վաւերականութեան մասին
 կասկած լինել չի կարող ի հարկէ. նա պարզ ցոյց է տալիս,
 թէ ինչպէս աւետարանի քարոզիչներն, ամէն հոգսից ազատ
 լինելու և ամբողջապէս իրենց կոչմանը նուիրուելու համար,
 ունեցուածքից զրկուելով՝ պէտք է վստահ լինէին, որ այդ
 նոր կոչումն ապրուստի անհրաժեշտ միջոցները կտար իրենց,
 և իրաւունք պէտք է ունենային վայելել այն, իբրև
 մշակ արժանի վարձուց:—Ուրիշ խնդիր է, թէ աւետարանի
 սպասաւորները ինչպէս են կատարել Տիրոջ պատուէրը և թէ

արդեօք կեանքի ներկայ պայմաններում այդ պատուէրն ամենայն ճշտութեամբ կատարել կարելի է: Պէտք է չմոռանալ միայն, որ նա վերաբերում է զուտ աւետարանի քարոզը տարածողներին՝ ոչ թէ եկեղեցւոյ պաշտօնեաներին առհասարակ, և յամենայն դէպս միայն նա կարող է երկնային արժէքն ուրիշների առաջ բարձրացնել, ով ոչ մի զին չի տալիս երկրաւոր բարիքներին և պատրաստ է ամէն բոլորէ զրկուել նոցանից: Փրկիչը չի կամենում, ասացինք, որ իւր աշակերտները կարիքի և նեղութեան մէջ լինեն, բայց պահանջում է, որ դոցա երկիւղով իրենց նուիրական կոչումը թողած մի կտոր հացի ետեւից չընկնեն:

Հարկաւ համայնական կեանքի բարենորոգութեան մի ծրագիր, բառի բուն նշանակութեամբ՝ նա չի տուել, անտեսական առօրեայ հարցերի նա չի խառնուել. և ի՞նչ օգուտ կունենայինք, եթէ խառնուած և իւր ժամանակի Պաղեստինի համար շատ էլ օգտակար օրէնքներ տուած լինէր: Ահ, որ նոքա արդէն հին և անգործադրելի կլինէին, ի դուր կխճողէին ու կշփոթէին աւետարանի պարզ ըմբռնումը: Ինչպէս որ երկու իրենց գոյքի բաժանման համար վիճող եղբայրների մէջ դատաւոր լինել չկամեցաւ Փրկիչը, այդպէս և կհրաժարուէր անշուշտ ժամանակակից հասարակութեան զբաղեցնող հազար ու մի անտեսական հարցերի պատասխանը տալուց, որովհետեւ Նորա հագածութեան առարկան միայն բարոյական կեանքն էր իւր յաւիտեական սկզբունքներով, և նա վստահ էր, որ եթէ այդ հիմքը հաստատուն լինի՝ ժամանակաւորն ինքն իրեն կուղղուի և կյարմարուի դորան: Ուստի մեծ անտեղութիւն է իբրեւ անտեսական մի նոր դրութեան օրէնք ընդունել Նորա այնպիսի խօսքերն, ինչպէս՝ «Քեզնից բան խնդրողին տո՛ւր», այդտեղ ի նկատի են առնուած միայն երկու հարեանների, որոնցից մէկը կարօտութեան մէջ է և միւսը կարող է մի պատառ հացով, մի կտոր շորով օգնել, — ոչ թէ մեր ժամանակի քաղաքակիրթ աշխարհի կեանքն իւր բարդ յարաբերութիւններով: Բայց այն, ինչ որ իբրեւ սկզբունք ուղիղ է ամենապարզ յարաբերութիւնների համար՝ պէտք է ուղիղ լինի յիրաւի և

գործադրութեան միջոց գտնէ ամենաբարձր պայմաններում: Այդ տեսակետից ոչ մի կրօն այնպիսի մեծ յեղափոխութիւն չի ձգել հասարակական կեանքի մէջ, ինչպէս քրիստոնէութիւնը: Սիրիւր ընկերիդ, ինչպէս ինքդ քեզ — մի թուացիկ խօսք չի եղել այդ Փրկչի բերանում, այլ լոյս է սփռել կեանքի բոլոր իրական հանգամանքների վերայ՝ սով, աղքատութիւն, թըշուառութիւն իրենց իսկական պատկերով ցոյց տուել և իբրև ճշմարիտ կրօնի անհրաժեշտ պահանջ ներկայացել: Յիշել ենք արդէն վերջին դատաստանի նկարագիրը, ուր ընկերական սիրոյ գործադրութիւնից կախուած է երևում մարդոց վիճակի յաւիտենական որոշումը: Եստին է այս նկատմամբ նաև Մեծատան ու Աղքատ Աղաղարոսի առակի միտքը: Իբրև լրացուցիչ, կրեւնք այստեղ Հարուստ երիտասարդի խօսակցութիւնը Փրկչի հետ այն ձևով, ինչպէս պահուել է տաճականոն Եբրայական աւետարանի մէջ: — Հարուստի մէկն ասաց Տիրոջ. Վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որպէսզի կեանք ունենամ: Նա պատասխանեց. Մարդ Աստուծոյ, օրէնքն ու մարդարէութիւնները պահիր: — Այդ արել եմ, վրայ բերաւ սա: — Գնա՛, ասաց Նա, վաճառիր բոլորն ինչ որ ունիս, բաժանիր աղքատներին, ապա արի ու հետևիր ինձ: Հարուստն այդ ժամանակ սկսեց գլուխը քորել, ու լսածը նրան դուր չեկաւ: Իսկ Տէրն ասաց նրան. Ինչպէս կարող ես պնդել, թէ ես օրէնքն ու մարդարէութիւնը պահել եմ, մինչդեռ օրէնքի մէջ գրուած կայ. Սիրիւր ընկերիդ, ինչպէս ինքդ քեզ: Տես քո քանի՜ եղբայրները՝ Աբրահամի որդիք, ցնցոտիներով են ծածկուած ու մեռնում են քաղցածութիւնից, իսկ քո տունը լիքն է բաղմամբ և բարիքներով, և ոչինչ դուրս չի գնում նոցա համար: — Այս խօսքերը շատ ձիշտ կերպով արտայայտում են, թէ ինչ էր զգում Յիսուս աղքատների թշուառութիւնը տեսնելիս և ինչ հեռութիւն էր հանում ընկերական սիրոյ պատուէրից, որ նոցա դրութիւնը բարեգործի: Սիրոյ մասին խօսելու իրաւունք չունի նա, ով թոյլ է տալիս իւր մերձաւորներին թշուառութեան մէջ խեղդուել:

Դժբաղդարար շատ տխուր պատկեր է ներկայացնում այս

կողմից մեր կեանքը: Թէ որչափ պակաս է և անուանական քրիստոնէութիւնը մեր ժողովուրդի՝ բուն, հասարակ ժողովուրդի մէջ, — ամենից կենդանի ազացոյցը զիւղական «ցեցերի» այն քսամենցուցիչ նկարագիրն է, որ մեր մի քանի շնորհալի գրողներ բերում են իրենց գրոյցներէ մէջ: Մենք փշաքաղուում ենք տեսնելով, թէ ինչպէս տանջուում է անօգնական գիւղացին ծայրահեղ անգթութեան և դադանալին բռնութեան ճիրաններում, և կարծում ու քարոզում ենք անմօռէն, թէ դորա իսկական պատճառը տգիտութիւնն է, թէ բաւական է զիւղացու աչքը բացուի, որ ամէն չարիք վերանայ մէջտեղից: Մնչդեռ ահա նորա ընկեր աչքը բացուած գիւղացին աւելի անհոգի կերպով է տանջում իւր նախկին վիճակիցներին, և երբ նա ուսում է առնում ու ինժիններ դառնում՝ հետը մէկտեղ նրբանում ու կատարելութեան են հասնում ամենավատ հակումները: Բայց մենք փոխանակ զգաստանալու և դարման որոնելու այնտեղ, ուր պէտք է՝ շարունակում ենք որոնել նոյն լուսաւորութեան շաւղի վերայ, որ այդպիսի փառաւոր արդիւնք է յառաջ բերել: — Դարմանը եղբայրական սիրոյ այն անսպառ ոգին է դարձեալ, որով շնչում է Քրիստոսի աւետարանը և որ նորա համար խօսք ու քարոզ չէ միայն, այլ նորա իսկական բովանդակութիւնը՝ հիմքը: Նա ձգտում է յիրաւի այնպիսի մի համայնք կազմակերպել, որ իւր մէջն առնէր ամբողջ մարդկային կեանքը և նոյնքան խոր տարածէր իւր ազդեցութիւնը, որքան խոր է մարդոց թշուառութիւնը, — մի համայնք, որի առաջնորդող սկզբունքն իրար դէմ մաքառող շահերը չեն, այլ հոգեւոր միութեան գիտակցութիւնը: Այդ տեսակէտից ո՛չ մի նոր տեսութիւն չի կարող լինել, որ նորա տուածին գերազանցէ: — Մարդոց հայեացքն արտաքին բարեկեցութեան մասին անդադար փոփոխուում է, և շատ բան, որ այսօր անհրաժեշտ պահանջ է համարուում, մի քանի տասնեակ տարիներ առաջ անծանօթ շօտայլութիւն էր: Բայց այն, ինչ որ իրօք կարեւոր է փոքր ի շատէ մարդավայել կեանք վարելու համար՝ բնակարան, ամենօրեայ հաց, մաքուր կենցաղ, — Փրկիչն ինքն ևս կարեւոր է նկատել և իրեւ երկրա-

և որ կացութեան արդարացի պահանջ ցոյց տուել: Եթէ մէկը հնարաւորութիւն չունի այդ պահանջին բաւականութիւն տալու՝ ուրիշները պէտք է օգնեն: Կասկած չինել չի կարող, որ Յիսուս այսօր նոցա կողմը կբռնէր, որոնք ամէն ջանք գործ են գնում ժողովուրդի խեղճ դասի դառն վիճակը բարւոքելու և աւելի յարմար պայմանների մէջ դնելու: Եւ նա կպահանջէր, որ իբրեւ ծառայի չօգնենք աղքատին, այլ իբրեւ եղբոր: Թէ ինչպէս պէտք է գործատրենք մեր ունեցուածքը՝ աւետարանն այդ մասին որոշ օրէնքներ չի սահմանում, բայց պահանջում է անկասկած, որ իբրեւ կատարեալ սեփականատէրեր չվերաբերուենք, այլ իբրեւ տնտեսներ՝ յօգուտ մերձաւորի գործադրելու պարտականութեամբ: Նա քարոզում է ամէնից վսեմ և ուժեղ համայնական սկզբունքը՝ մի եղբայրութիւն, որով կարողը պարտաւորուում է իւր տկար եղբոր կարօտութիւնը բաւնալու:

Կ. Վ.



ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Դ.

ԵՂԻԱԶԱՐ ԵՒ ՆԱՀԱՊԵՏ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐ

Նախընթաց շրջանի երեք նշանաւոր կաթողիկոսները, բարենորոգիչ դպրոցներից դուրս եկած, վերանորոգչական գաղափարներով ոգեւորուած, յուսով և հաւատով լի եռանդուն և անխոնջ գործիչներ էին՝ ազնիւ և անձնուրաց հայրապետներ: Նսքա իրենց բարձր հեղինակութիւնը և ազդեցութիւնը ձեռք էին բերել իրենց ներքին բարոյական արժանիքներով, հայ եկեղեցու փառքին և Մայր Աթոռի